



# ԲԱԶՄԱՎԷՊ

ՌԵԺԵ · 1865 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՄԱՐՏ

## ԽՕՄՆԱԿՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՆԱՊԱՏՍ ՀԱՅՈՑ

Բ

Ամառնամրտին նախընթաց օրն էր, յամին 404. Իբրև յանկարծական վտանգէ մը դրդած Կ.Պօլսոյ ժողովուրդը շտապելով՝ քաղբին հարաւային ծովեղերը կու գիպուէին իրարու վրայ, և գրեթէ 'ի ծով կ'ընկնէին. մանաւանդ թէ ոտքով ալիքները կտրել թռչիլ կ'ուզէին, նաւակ չգտնելով: Ոմանք լուծեամբ կենացին, ոմանք ձեռուրնին դէպ 'ի ծով՝ դէպ յերկինս՝ դէպ 'ի կուրծքերնին կու տարբերէին. ոմանք գթութեան ձայներ՝ թանալիւններ կանչելով, ոմանք անէծքներ թափէին. ամենքն աչուրնին տնկած դէպ 'ի հարաւ՝ Պրոպոնտոսի (Մարմառայի) ալեաց և Դեմոնիսեան (կամ Պոլինկիպեան) կղզեաց մէջ, գրեթէ մինչև ցկուրութիւն՝ բիբերնին տանջէին. ամենքն այլ ուզելով բռնել, արգելուլ, յետ դարձնել նաւ մը, նաւ մը՝ որ զիմացնէն երազ երազ կու սահէր

կ'անցնէր, կու հեռանար. և եթէ բռնել չէ՝ գոնէ պահ մ'այլ, անգամ մ'այլ կ'ուզէին տեսնել: Իսկ նաւն փախտաւ, և երկայնաձև բազմաթիակ՝ ցուկը ցրցած՝ ծովային նոր ցուցանքի մը պէս՝ ճօճալով ճապկըտելով ծփած ծեծուած ալեաց վրայ՝ շուտ շուտ սողայր, փախչէր թաքչէր. Իբրև թէ այն դիզուած ժողովուրդն՝ իրեն համար մթազին ու ըսպառնացայտ մրրիկ մ'ըլլար. մինչև կղզիներուն միջէն անցնելով հեռացաւ, փոքրացաւ. կէտ մը դարձաւ, հազիւ տեսանելի սրագոյն աչաց. որք քանի մը վայրկենէ ետեւ՝ ծովուն հաւասարած երեսէն զատ՝ այլ բան չտեսնելով՝ յուսահատեալ դարձան, ողբերնին և անէծքնին երկարելով, և բարկութեամբ արքունական ապարանից վրայ նայելով: Իսկ այն խուճապեալ նաւուն բարձրաւանդակին վրայ հանդարտօրէն նըս-



տած անձ մը՝ կու նայէր անխուով, գոնէ ըստ արտաքին տեսեանն, ընդ ծով և ընդ ցամաք. կու նայէր այն ծովեզերքը պարսպաձև պատած ժողովրդեան վրայ, և ճանչնալով անոնց հայրասէր գովթն ու գորովը՝ չէր կրնար անոնց ետեէն բարձրացած Պօլսոյ խրոխտ աշտարակներն ու ապարանքը՝ սուրբ բարկութեամբ անգամ դողացընել. չէր թշնամաներ՝ չէր անիծաներ ապերախտ մայրաքաղաքը, և ոչ աւեր ու երեր կարգայր անոր. այլ զարդարութիւն և ըզդատաստան՝ թողլով միայն ամենագէտ դատաւորին, ինքն ողջունելով, օրհնելով և աղօթելով՝ կու հեռանայր ծածկուէր՝ անհետ կ'ըլլար իր հինգ տարի դայեկաբար դատախարակած ժողովուրդէն զոր մէկ մ'այլ պիտի չտեսներ կենդանի աչօք. այլ սրտովն դեռ տեսներ, լսէր և իմանայր՝ որքոց և այրեաց շնորհակալութեան միմունջը, զղջացեալ մեղաւորաց ողբաձայն ապաշաւանքը՝ որոց համար ինքն Պատմող կամ Քարոզ ապաշխարոթեան և ողորմոթեան աշուանեցաւ. կու զգայր մեծի և փոքու խանդաղատանքը. ինչուան որ անդարձ ու անդադար նաւն անգուլթ՝ խոտորելով 'ի խորշն Կիանեան (Մուտանիա կամ Կէմէիկ) Պրոպոնտոսի ձևն անգամ կորուս. և քիչ ատենէն ասիական եզերքը հասնելով՝ Բիւթանիոյ ցամաքին վրայ ձգեց զՈսկերքսն:

Եւ ոչ կէս աղատ պանդխտի ցուպն սրուեցաւ անոր, որ ըստ կամացն իրեն օտարութեան բնակարանն ընտրէ. այլ պահապանաց մատնուեցաւ ըստ արքունի հրամանաց, որ տանին յաքսոր՝ յաշխարհ հեռի, յերկիր ցուրտ և քաւուտ, 'ի քաղաք ամայի և անապատ, 'ի ծայր սահմանաց Յունաց և Հայոց: Հոն մնայ որչափ որ մնայ, մինչև ցմահ...

Իսկ ինչ էր այդոր յանցանքն, որ այդպէս դատապարտեալ 'ի ժողովոց եղնոյն՝ և 'ի կայսերական դատակրնոյն՝ արտասահման կ'ըլլայ 'ի հե-

1 Քաղկեդոնի (Գատըքէյ) մէկ թաղն, ուր առջի անգամ Թէոփիլեանք ժողովեցան՝ Կառնի կ'անուանէր:

ռաւոր և 'ի դժուարաբնակ տեղ մը: — Իսկական յանցանքն՝ իր Ոսկերքսն և ադամանդիկ անձն ըլլալն էր, ըստ որում առաջ տեսանք. իսկ ըստ չարախօսաց՝ ծաղրելի կամ ողբալի բաներ. ծաղրն այլ ողբն այլ իրենց գլխուն. որք առաջին յանցանք սեպած էին զայն՝ որ Ոսկերքսն ոչ ուրիշի քով կերակուր կ'ուտէր, և ոչ զուրիշը հրաւիրէր: Գեղեցիկ խրատ ոմանց պետաց, որ թեւեւ միայն ասոր հակառակ կերպով կրնան ցուցընել իրենց առաջնորդութիւնը և ընդունակութիւնը: Ոսկերքսնն որ 'ի մանկութենէ յանապատա Սորոնոյ վարժեր էր Սնտոնի և Պիմէնի կերակրոց (ճգնաւորական չորակերութեան), այն աստիճան փափուկ և տըկար ստամոքս ունէր՝ որ այլ ո՞ր և իցէ կերակուր չէր կրնար ընդունիլ, այլ հազիւ թեթեւ բաներ. և յիրաւի Թէոկրիտեան կամ Եղիշեան անարիւն ճպտանց նմանեալ՝ աստուածային բանին քարոզութիւնն ըրեր էր սնունդ իրեն, և կ'ուզէր ընել իր հօտին այլ: Թշնամիք՝ փառասիրութիւն կու սեպէին զայս: — Նոյնպէս բամբասէին, թէ խիստ յանդիմանութեամբ կ'անարգէ զիշխանս և զթագազունս, կ'արհամարհէ զմեծատունս, և աղքատաց ու ռամկաց տէր կու կենայ: Թէոփիլոս կ'ըսէր, թէ իմ վաճառածներս ընդունել է, բանադրեալներս՝ արձակել է, իմ իրաւանցս խառնուել է. — տաքզուլի Ղափիք կ'ըսէին թէ Որիգենէսի պաշտպան և հետևող է. — Սեբրիանոսը և Սիսինիոսը կ'ըսէին՝ թէ նոր ճամբայ բանայ, մեղի չնմանիր. — Նովատիանոսը, թէ մեղաւորներն անխտիր սիրով կ'ընդունի, և այլն և այլն: Որոց թէ ստուլթիւնն թէ ծուլթիւնն և թէ պատասխաններն դիւրին և յայտնի են:

Բայց ես ոչ Յովհաննու վարքը կ'ուզեմ պատմել քեզ, Հայկակ, ոչ զարդարն արդարացընել, և ոչ այն Ոսկերքսն խօսնակը՝ դովել ջանալ, որոյ գովութեան համար արդարեւ միայն իրեն նման լեզու կամ գրիչ արժանի է: Սակայն մեզի, ազգային սրբազան ի-



րաւունք է այս գիշեր մեր հայրենեաց հանդիսից մէջ խառնել Կ.Պօլսի հայրապետին յիշատակը . զոր այսօր (27 յունուարի) տօնեն ամենայն ազգք՝ (ըստ Յայսմաւուրաց կարգի), որ է օր փոխադրութեան մարմնոյ նորա յաթոնն : — Ազգային իրաւունք մը . վասն զի եւ թէ Ոսկիբերանի հայրենեօքն պարծին Ասորիք , լեզուան և աթոռովն՝ Յոյնք , արդեամբք և օգտին՝ ամենայն ազգք , Հայք՝ անոր արսորանաց վանատուրք և հիւրընկալք , անոր վերջին տարիներուն կենակիցք , անոր յետին հանգստեան մարմնոյն սպասաւորք և պահապանք , աւելի զգայուն և սխրալի պարծանք ունին Հայք : Ասոնցմով և դեռ ուրիշ մասամբք այլ՝ մեր է Յովհան Ոսկիբերան առաւել քան թէ ուրիշ ազգաց , և յետ Յունաց՝ հայադիր օրացուցակին մէջ աւելի արժանաւոր և իրաւացի տեղի ունի : Անոր համար թողլով իր առաջին կենաց կերպ կերպ յիշատակները , կ'ուզեմ մէկ երկու գիշեր քեզի հետ , Հայկակ , նուիրել՝ եկեղեցւոյ խօնակիս վերջին և թաքուն կենացն՝ յաւնապատու Հայոց , ինչպէս ինքն իսկ շատ հեղ կ'առաւանդէր իր թղթոց մէջ , (ուսկից պիտի քաղեմ այս առանձին կենաց զիպուածները) , զայն տեղն՝ ուր երեք վերջին և անգին տարիները շնչեց անմահահոտ Ոսկիբերանն : —

Դեռ Ոսկիբերանի հակառակորդքն իրենց անիրաւ ժողովոյ աթոռներէն չէին իջած , դեռ անոր գահուն վրայ նստելու՝ պնդերես անձ մը կու փնտրուէին , դեռ իր արդար պաշտպանքն և չարաչար զրկեալ հօսն և հովիւք , որքք և այրիք , աղքատք և ապաշխարողք՝ իրենց հովուապետն և հայրապետը կու լային . կէպք՝ իրեն հաւատարիմ՝ մնացեալ եպիսկոպոսաց դիմելով , կէպք՝ մեծասիրտ և մեծահաւատ Ս . Ոլոմպիա տիկնոջ քով ողբալով , մինչդեռ Արկադէոս երկու մտքի և խղճի մէջ կու տատանէր . իսկ գծնիկ դշխոյն Եւդոքսիա՝ դեռ ապարանից պատշգամբէն կու դիտէր զոլորտս Պրոպոնտոսի , որ չլլայ թէ առջի անդամուն պէս յետ դառնայ

արսորատար նաւն , չլլայ թէ նորէն ժողովուրդն ովսաննայով ընդ առաջ դիմէ՝ զծով 'ի ցամաք փոխելով , չլլայ թէ անգամ մ'այլ իր գոռոզ գլխուն վրայ կայծակնաթափ բացուի Բերանն—Ոսկի . — և ահա անոր սուրբ աթոռէն , արքունի պալատան քովի եկեղեցւոյն միջէն , և ատենակալաց ապարանքէն դուրս պոռթկացին թանձր ծուխ ու կարմիր բոց մը , և իբր իրարու հետ կռուելով ուժգին և ահաւոր յերկինք 'ի վեր դիզուէին<sup>1</sup> : Ոչ ոք երկբայեցաւ թէ այդ կրակդ՝ արդարոյն անիրաւ դատապարտութեան վրէժն էր . սակայն ո՞վ էր զայն բռնկցընողն . — խնդիրն և վէճն այս եղաւ : Վրիժապարտք՝ շարունակելով իրենց լրբութիւնը՝ ըսին , թէ այդ այլ թէ ոչ ձեռք Յովհաննու , դոնէ իր թելադրութեամբն է , իր սարկաւազուհի Ոլոմպիադայ և ուրիշ կուսակցաց գործովն է , անոր շունչն է այս դժուարաշէլ հրդեհը բռնկցընողն . հալածուի խռովարարն , հեռացուի հրձիգն . հեռու հեռու այս կողմէն : Այս զրպարտութեան վրայ այլ վրդովեցաւ վշտացաւ բողբոջ արդէն զարնուած սիրտն , ինչպէս նաև յետոյ իր նամակաց մէջ այլ կու յայտնէ :

Հագիւ թէ հասած 'ի Նիկիա իր բռնաբար տարադրութենէն , ծովուն վրայ ասպատակօրէն սահելէն , և կրքերէն քիչ մը դադրած , հանդիստ կու փնտռէր՝ մարմնէն աւելի իր սրտին : Միայնացեալ կ'երթար քննէր իր սուր մտօք և վառ հոգւովն՝ այն յաւերժայիշատակ սուրբ հանդիսարանը , ուր ութսուն տարի առաջ՝ առաջին անգամ միաբան ժողովեր էին յամենայն կողմանց քրիստոնէութեան՝ անոր գլխաւոր առաջնորդք , 348 հայրապետք . որոց շատն պէս պէս հալածանքներ , պըսոր , տանջանք և կտտանք քաշեր էին , և դեռ քաշեցին անկէ ետեւ այլ , յանուն և 'ի պաշտպանութիւն աստուածութեան Քրիստոսի և ճշմարտութեան աւետա-

1 Խորեն . Գ . ԾԹ . « Եայնմ ժամանակիս շարժմանց ահագնից և հրընկեցութիւն եղեալ 'ի Նիւղանդին , որ յազադս մեծին Յովհաննու » :



րանի նորա՝ Ոսկիբերան զինքն և աթոռն մոռցած՝ հիացմամբ կու պտրտէր այն վեհ, և թէ կրնայի ըսել՝ հսկահասակ հայրապետաց հանդիսին մէջ, փոխ առ փոխ խօսելով ընդ Ոսիոսի, Աղեքսանդրոսի, Մակարայ, Ղևոնդիոսի, Արիստակիսի, Յակոբայ Մծբնացւոյ, Աթաճանասի և այլոց հետ, ամենէն շնորհաւորութիւն և քաջալերութիւն լսելով. և թէ՛ իր մեծամեծ վաստակոց և սիրոյն պատկէ՛ այս խուլ և խաւար աշխարհիս մէջ՝ պիտի ըլլար իրենցմէ շատին հանդիպածը. — զրպարտութիւն, հալածանք, պատրանք, և . . . խոտովանողական մահ: . . . Ո՛րչափ քաղցր էր Ոսկիբերանի՛ այսպիսի տեսեանց մէջ յերկարել. և յետ այն նախադաս հայրապետաց՝ տեսնել նաև երկրորդ գումարն այլ 150 ից, որք դեռ քիչ տարի առաջ (յամին 384) իր գահանիստ մայրաքաղաքին մէջ ('ի Կ.Պօլիս) ժողովեցան, և ուրոց շատն աչօք իսկ տեսեր, և դեռ ումանք ողջ այլ էին. անշուշտ անոնց մէջ կու փնտռէր և կու փարէր իր սիրելի և դրուատեալ Անտիոքայ հայրերը, զԲարեղաս և Մելիտոս, և իր գահուն նախորդները Մետրոփանէս, Աղեքսանդրոս, Գրիգոր Աստուածաբան. անշուշտ կ'ըսէր զմայլեալ միտքն՝ Բարեղք է ինձ աստ լինել ընդ սոսա . . . երբ յանկարծ մեծ շնկոց՝ զղրդիւն մը փրթաւ, իր տեսլարանին դռներն գրեթէ խորտակեցան. պահապանք, գերեպանք, ջորեպանք ներս թափեցան . . . « Շուտ » շուտ, փութա՛ ելի՛ր, հեծի՛ր, արքունի » հրաման է. պէտք է հեռացընենք քը. » չենք տանինք զքեզ յաքսոր, յօտար, » մինչև 'ի Կոկիւսոս, մինչ 'ի Տաւրոս, » մինչ յԱմանոս, մինչև 'ի Ժայրս սահմա » նաց ինքնակալին »: — « Փառք քեզ » Աստուած, յաղագս ամենայնի ». Ըսաւ. և զնոյն ձայն կրկնէր, յեղյեղէր քաղցրաձայն խօսնակն Եկեղեցւոյ. և տալով զինքն 'ի ձեռս և 'ի կամս վարդապն և խնամոցն Աստուծոյ, քշուէր կ'երթայր յաշխարհ հեռի, յանժանօթ ճանապարհ: 70 օր շէն և անշէն տեղիք, լերինք և անտառք, գետք և քա-

րաժայռք զնոյն ձայն, զնոյն երգ՝ բիւրանգամ լսեցին, բիւր անգամ կրկնեցին. « Փառք քեզ Աստուած, փառք » քեզ, յաղագս ամենայնի փառք քեզ »: Երկու շաբաթ կեցեր էր Ոսկիբերան 'ի Նիկիա, ուսկից ելաւ յուլիսի չորսին: Բիւթանիոյ մայրաքաղաքէն մինչև 'ի Կեսարիա՝ 'ի մայրաքաղաքն Ա հայոց և Կապադոքովիոյ, յարեմոից յարեւելս հարաւոյ՝ գրեթէ 300 մղոն կ'ըլլայ. իբրև 25 օր մը քշեց այս ճամբան, որ 'ի սկզբան արահետ ըլլալով՝ քիչ մը ամառնային տաքուն դէմայլ կրնար հանդիստ տալ. մանաւանդ որ պահապանքն այլ հոս մարդասէր գտուեցան և շատ չէին չարչրկեր. գուցէ չէին այլ կրընար, ծանօթ քաղաքաց և գեղից միջէն և սահմաններէն անցնելով, ուր անդադար երթեակ կար՝ արեւելքէն դէպ 'ի Կ.Պօլիս կամ ասկէ հոն՝ ուղևորաց. և ուր որ հասնէին՝ համբաւն աւելի առաջ հասած գտնէին: Շատ լաւ կու ճանաչէին այն կողմերն այլ զՈսկիբերան, որոյ և գերագոյն հովուապետութեան վիճակ էին, և իրեն արժանաւորապէս կարեկցէին. ոչ տեղացիք միայն այլ և հեռաւոր եկք. ինչպէս ինքնին Ս. հայրապետն վկայէ մէկ թղթին մէջ առ Ոլոմպիադա, և յանուանէ միայն զՀայս յիշէ, թէ « յարեւելք և 'ի » Հայոց և ուրիշ կողմերէ՝ ճամբու վրայ » հանդիպողքն՝ զմեզ տեսնելով՝ աղբե » ռաբար արցունք կու թափեն, լալով » ու հեծկտանօք ետնուս կու գան, » մեղմէ չեն բաժնուիր: Այս բանս ա » նոր համար կ'ըսեմ՝ որ գիտնաս թէ » հոս այլ շատեր կան, որ նոյն ցաւով » վշտակից կ'ըլլան ինձի՛ ինչպէս դուք » հոն »: Ուրիշ թղթով մ'այլ. « Երբոր » կու տեսնեմ՝ որ զանազան քաղաք » ներէ և բնակութիւններէ դուրս թա » փելով բազմութիւն արանց և կա » նանց՝ կու լան կ'ողբան մեր վրայ, ձեր » ցաւը կու յիշեմ, թէ որքան սաստիկ » պիտի ըլլայ, երբ հոս զմեզ առաջին » անգամ տեսողքն իսկ այսչափ կու » տրտմին, և որչափ աղաչենք ու պա » ղատինք որ չհոգան զմեզ՝ անոնք այլ



» աւելի խեղճ կ'ընեն կու լան » . և այլն : Ոսկիբերան այս խօսքերով կ'ուզէր իր ազնիւ սարկաւազուհին և հաւատարիմ աշկերտները մխիթարել . բայց թերևս առանց ուզելուն՝ կ'իմացընէ մեզի, թէ ի՞նչ աստիճանի մեծ էր իր համբաւն, արժանիքն, և հրաշալի ու գթաշարժ կերպն, որ այսպէս անցած տեղերը յոտք և 'ի գութ կու հանէր :

Հոս պէտք է յիշել, որ իր երկայն և կրկին ճանապարհորդութեանց մէջ՝ թէ և շատ հեղ այսպէս 'ի տեսողաց կարեկցութիւն գտաւ, բայց ոչ միշտ և 'ի պահապանացն . ոչ այլ դիւրութիւն ճանապարհի . այլ ամեն կերպ նեղութիւն և զրկմունք և վախ, ցաւ և հիւանդութիւն, տաքէն և ցրտէն տազնապ : Մանաւանդ որ բնութեամբ այլ փափուկ և տկար կազմուածով էր . իր մեծ և վառ հոգւոյն արտաքին պատեանն՝ շատ անհաւասար և փոքր էր . տարիքն այլ արդէն (ըստ ոմանց) վաթսուներ լցած, մազերն թափթրփած, ստամոքսն աւեր . շատ դարմանոյ և խնամոց կարօտ : Որոշ փոխան այնպիսի չարակրութիւն մը պատրաստեցաւ իրեն, որոյ հազիւ թէ զօրաւոր մարդիկ կարենային համբերել : Եւ սակայն ինքն ուրախ զուարթ՝ իր երզն 'ի բերան կ'երթար . և բաւական այլ դեռ ուժով և առողջ էր իսկը բան : Իսկ իրեն մխիթար և օգնական ընկեր ունէր քանի մը եկեղեցական պաշտօնեայ, որք Կ.Պօլսէն հետն եկեր էին, չկարենալով զատուիլ իրմէ . և աւելի կու մխիթարուէին անոր ընկեր և վշտակից ըլլալնուն, քան թերևս մխիթարէին : Իր մէկ մեծ մխիթարութիւնն այլ էր (որպէս և ամենայն աքսորելոց և վտարելոց, եթէ այս բաղդս ունենան) բարեկամաց հետ թղթակցիլն . պանդրխտութեան երեք տարուան մէջ գրաւներէն՝ մօտիկ 250ի չափ նամակ և ճառ ձեռուրնիս հասած են, առ զանազան անձինս, հեռաւորս և մերձաւորս, սկսեալ յՈլումպիադայ մինչև առ Ս. Քահանայապետն իննովկենտիոս . այս նամակներէն շատն, մանաւանդ առաջինքն, Ոսկիբերանի ընտիր գործոց կար-

գը կու գրուին : Ոչ միայն աքսորանաց տեղէն, այլ և ճամբուն իջնաններէն կու գրէր, և երբեմն կ'ընդունէր այլ իրրև հասարակ մահկանացու և ընկերակեաց անձ մը՝ այն մեծ սիրտն այլ կարօտէր մտերմաց զրուցիլ, բարեկամական խօսքի և մխիթարութեան . ահոր համար ստէպ կ'աղաչէ թղթոցը մէջ՝ որ անպակաս գրեն իրեն, և մեծ պարգև կու սեպէ անոնց նամակը . կու մխիթարէ և քաջալերէ բարեկամները, և զեղեցիկ ու հաստատուն և երբեմն երկայն խրատներով՝ զմեզ անգամ կու լուսաւորէ :

Ո՛հ, չիղիմանար սիրտ, երբ այն ցաւագարն մարմնով՝ անանկ դժնդակ տեղունք և ատեններ կրածները նկարագրէ, թէ և ջանացած է յայսմ մասին շատ չըսել, որ իր սիրելիները չտխրեցրնէ . սակայն բաւականէն այլ աւելին մեզի թէ ցաւերը ճանչնալու, և թէ անոնցմէ աւելի՝ սէրն, որով զառջինները մոռցած՝ կու ջանայ սիրտ տալ անոնց՝ առ որս կու գրէ : — Ասոնցմէ մէկն է Արաբիոս մը, որ յանձնարարութեան թղթեր տուեր և գրեր էր՝ որ եթէ 'ի Սերաստիա երթայ՝ իր տունը հանդիպի և հանգչի տիրոջ պէս : Սուրբն շնորհակալ կ'ըլլայ, այլ և կ'իմացընէ որ թըշնամիքն չթողին որ երթայ հոն՝ 'ի մայրաքաղաքն Բ հայոց, վասն զի Եւդոքսիա ուզեց որ աւելի հեռու քշուի, 'ի Կոկիւսոն . և կ'աղաչէ սուրբն որ եթէ հոս այլ ծանօթ ունի՝ գրէ անոնց այլ յանձնարարութեան թղթեր :

Թղթակցաց մէջ առաջին և սիրելեացոյն անձն, և արժանաւոր Ոսկիբերանի սուրբ սիրելութեանն է՝ շատ հեղ յիշածս Ոլումպիադա . զոր և հարկ է քիչ մ'աւելի ծանօթացընել քեզ, Հայկակ : Մեր պատմութեան մէջ միտքդ կու գայ Բ Արշակ թագաւորին համանուն դըշխոյն, (և երանի թէ բոլոր պատմութիւնն չգար 'ի միտս, այլ և ելնէր ամեն յիշատակէ) . կայսերական ցեղէ կ'ին՝ և երբեմն ամուսնացած ընդ կոստանդնույ կայսերադին, յետոյ մեր չուառ թագաւորին . ասոր ազգական, և ոմանք ին-



չուան դուստր այլ կարծեցին այս կրթ-  
սեր Ոլումպիադայն, (ծնած իբր յամի  
368), 'ի հօրէ Անիսիոսէ, և 16 տա-  
րուան հարսնացած Ներքիտիոսի իշխա-  
նի. ուսկից յետ 20 ամսու այրի մնա-  
լով, չուզեց անկէ ետև աշխարհի երես  
տեսնել. թէպէտ և կայսրն, մեծամեծ  
իշխանք, մանաւանդ Ելպիդիոս Սպա-  
նիացի իշխանն և խնամին կայսեր՝ շատ  
ջանային որ ասոր կին ըլլայ, և այս բա-  
նիս համար՝ առաքինակրօն և մանկա-  
մարդ այրւոյն ինչքը գրաւեցին (որ ան-  
բաւ շատ էին). սակայն նա հաստատ  
մնաց իր առաքինի կամաց մէջ, բարե-  
պաշտութեան գործերով մխիթարուե-  
լով ամենայն զրկմանց վրայ. մինչև յու-  
սահատեցան բռնադատողքն՝ իր գեղեց-  
կութիւնը և սիրտը յափշտակելու, զոր  
բոլորովին նուիրեր էր Աստուծոյ: Պատ-  
րիարզն Նեքտաուիոս օրհնեց զնա Սար-  
կաւագուհի. որով՝ երբ իր ստացուա-  
ծոց այլ ազատ մատակարարութիւնը  
դարձուցին իրեն, եղաւ կրկնակի մայր  
աղբատաց և տառապելոց, ստակով  
այլ սրտով այլ խնամելով զանոնք, և  
զամեն կարօտ անձեր, և մանաւանդ ե-  
կեղեցական և եկեղեցի, ինչուան հե-  
ռաւոր կողմեր: Իրաւ քիչ տիկին այնչափ  
հարստութիւն ունեցած է, բայց աւելի  
քիչք զանոնք այնպէս օգտակար ըրած  
են. վասն զի քիչեր այլ իր բնականէն  
աւելի մտաւոր ձիրքն ունեցեր են. մեծ  
և տաք հաւատք, զգաստութիւն և խո-  
հեմութիւն. որով չէ թէ լոկ հասարակ  
ժողովրդեան, կամ իշխանաց և արքու-  
նեաց միայն, այլ և իմաստուն և սուրբ  
եպիսկոպոսաց քով՝ մեծ յարգ մեծ պա-  
տիւ ունեցաւ: Ս. Գրիգոր Նազիանզա-  
ցի, Ս. Գրիգոր Նիւսացի, Ամիլիոս, և  
այլք, իրեն ընծայած են իրենց գե-  
ղեցիկ գրուածներէն ոմանք. Ս. Եպի-  
փան, Մարութա, Թէոփիլոս, Ակակ, Սե-  
բերիանոս, և այլն, իրմէ ողորմութիւն  
կամ օգնութիւն գտած են: Բայց իր ա-  
մենէն մեծ պարծանքը կրնանք սեպել  
մեր Ս. Ոսկիբերանին մտերմութիւնն,  
յարգն, խնամքն և թղթակցութիւնն.  
և թերևս ասոնցմէ աւելի այլ իր վրչ-

տակցութիւնն՝ անոր համար և անոր  
հետ: Վասն զի յետ արտաբնաց խօս-  
նակին՝ հալածեցին իրեն զմայլած ուն-  
կընդիրն այլ, և շատ նեղութիւն հա-  
սուցին, որոց կու ջանար հեռուէն իր  
անապատէն այլ քաջալեր տալ Ոսկի-  
բերան. իսկ յետ իր մահուն՝ շատ եր-  
կար չգիմանալով այս ողջախոհ տաա-  
րակ այլ, կնքեց իր մաքուր կեանքը  
(յամի 410), և դասեցաւ ընդ սուրբս,  
յիշեալ 'ի Բունաց և 'ի Լատինաց:

Ահա այս սրբուհւոյս՝ և իր եկեղեցւոյ  
սարկաւազուհւոյն է՝ որ Ոսկիբերան  
այս առաջին ճանապարհորդութեան  
մէջ այլ զանազան թղթեր գրած է. և  
որոց մէկուն մէջ, կ'երեւի թէ արքու-  
նի զիւր ճամբէն դառնալով դէպ 'ի  
հարաւ, 'ի կեսարիա երթալու ատեն  
կրած դժարութիւնները կու յիշէ. «Տե-  
» սած լսած բանս չէր. ժայռեր և ջրի  
» տակ ծածկուած քարեր. մրրիկք և  
» փոթորիկք թնդալով կ'որոտան. գի-  
» շեր անլուսնկայ, թանձր մէզ, գահա-  
» վէժք և քարաժեռք. և սակայն ասանկ  
» ծովու մէջ նաւելով՝ նաւահանգիստը  
» կեցողներէն պակաս հանգիստ չեմք».  
և կ'աւելցրնէ թէ մարմնով այլ առողջ  
եմ, սրտիւ զուարթ, պահապան զի-  
նուորք այլ ձեռքերնէն եկած խնամքը  
կ'ընեն. « ուստի զասոնք գիտնալով,  
» զու այլ տիկին իմ բարեպաշտուհի,  
» յաղթէ այս մրկաց և ալեաց. և քու  
» առողջութեանդ վրայ ապահովէ զիս,  
» կ'աղաչեմ»: Ուրիշ թղթոց մէջ առ-  
սա ինքն և առ ուրիշ բարեպաշտ տիկին  
մը (Թէոդորա)՝ մնացեալ ճամբուն մէջ  
քաջած հիւանդութիւնը և չարչարանքը  
կու յիշէ. « Հալեցանք, մաշեցանք, հա-  
» զար կերպ մահուամբ մեռնելու մօտե-  
» ցանք... մէկ կողմէն անդադար տեն-  
» զով տանջուէի. մէկ այլ կողմէ գիշեր  
» ցորեկ հարկ էր ճամբայ ընել. ցորեկը՝  
» արևուն տօթէն, գիշերը՝ տքնութե-  
» նէն տանջանք. հարկաւոր եղած բա-  
» ներ չկան, զիս հոգացողներն՝ աղ-  
» քատ. բանտարգելոցմէ պակաս չէր  
» քաջածներս... ոչ հաց գտուէր և ոչ  
» աղէկ ջուր ճամբուն վրայ... վերջա-



» պէս հիւանդադին հասայ 'ի կեսարիա՝  
 » իբրև ալէկոծեալ նաւ մը, և հոն այլ  
 » մէկէն չհանգըստցայ. ինչուան որ ճար  
 » տար բժշկաց խնամօք, բայց աւելի  
 » անոնց կարեկցութեամբը՝ քան թէ  
 » դեղերով՝ ըզննացայ։... Փառք Աս.  
 » տոռնոյ յսդագս ամենայնի. Այս  
 » խօսքս՝ ինծի ամեն հանգիպած դի.  
 » պուածոց մէջ չեմ կրնար զանց ընել.  
 » և ոչ որ զայս յինէն կրնայ յափշտա.  
 » կել։... Շատ բան կար ըսելու (առ  
 » թէոգորա գրելով), բայց չեմ ուզեր  
 » սիրտդ խռովել. թող լռենք. բայց  
 » միայն այս մէկս այլ ըսեմ... որ այնքան  
 » ճոխ և հզօր բարեկամներ ունենալով  
 » այլ չիկրցանք արժանի ըլլալ այն շնոր.  
 » հաց՝ որ չարագործաց անգամ՝ կու  
 » շնորհուի. այսինքն, քիչ մը մօտիկ և  
 » բարեխառն օգով տեղ մը բնակելու.  
 » այլ և այսչափ չարչրկած ու ցաւագար  
 » մարմին ունենալով, և իսաւրացոց  
 » (աւազակաց) վախով չորս դին պա.  
 » տած ըլլալով, այս պզտիկ ու չնչին  
 » շնորհքէն այլ զրկուեցանք։ Այս այլ  
 » 'ի փառս Աստուծոյ ըլլայ. և ոչ եր.  
 » բեք դադրինք յամենայնի փառս տալ  
 » Աստուծոյ. Եղիցի անուն Տեառն օրհ.  
 » նեալ յաւիտեան »։ Անցողաբար յի.  
 » չեմ, որ այս թղթիս մէջ կ'ըսէ Ոսկի.  
 » բերան առ թէոգորա, թէ այս չորրորդ  
 » կամ հինգերորդ թուղթն է որ կու գրէ  
 » առ նա, անկէց աւելին այլ գրած է առ  
 » Ոլոմպիադա, և առ այլս. որովք յայտ.  
 » նի կ'երևի իր վառվռուն միտքն, տաք  
 » սիրտն և անդադար մատներն, որք այն.  
 » քան հազարաւոր ճառեր արտադրեցին.  
 » Ոչ քարաժայռք ճանապարհին և ոչ  
 » անհարթութիւնք օդոց, ոչ իսկ հիւան.  
 » դութիւնք կրնային յոգնեցընել, լռե.  
 » ցընել, դադրեցընել այն անխոնջ խօս.  
 » նակը։

Ճամբէն աւելի եռօրեայ ջերմին տա.  
 » քէն տկարացած՝ հազիւ կրցաւ Ոսկի.  
 » բերան զինքը ձգել 'ի կեսարիա մայրա.  
 » քաղաք. և անոր մէկ անձանթով թա.  
 » ղին մէջ յանկողին ընկած բժիշկ և դար.  
 » ման փնտռել, զոր դիւրաւ չգտաւ 'ի  
 » սկզբան. բայց յետոյ ոչ միայն բժիշկը,

այլ բոլոր քաղքին գզերն, միանձուռը  
 և միանձնուհիք, ամենայն բարեպաշտ  
 անձինք՝ իբրև ուխտի դիմեցին իրեն, և  
 մէկմէկէ յափշտակել կ'ուզէին իրեն  
 ծառայելու պատիւը։ Միայն, կ'ամա.  
 չել ըսել, միայն անոնց առաջնորդն և  
 հովիւն՝ Փարեսորիոս արքեպիսկոպոսն՝  
 ոչ երեւցաւ Յովհաննու և ոչ այլ կ'ու.  
 զէր տեսնել. կամ՝ թէ չէր այլ կրնար,  
 նախանձով և հակառակութեամբ կու.  
 ըացեալ. ինչպէս իրմէ առաջ կարծուի  
 որ Անկիւրիոյ արքեպիսկոպոսն այլ նոյն  
 կըրով բռնուած, ինչուան մահուան ըս.  
 պառնալեօք կու վունտէր զՍուրբն՝ իր  
 թեմէն. բայց ինքն շուտով մեռաւ։ Ոս.  
 կիբերան առաջուց կու դուշակէր հոս  
 այլ ըլլալիքը, թէ և ճամբան միամիտ  
 անձինք իրեն աւետիս կու տային թէ  
 կեսարու արքեպիսկոպոսն կու սպասէ  
 քեզի. իսկ ինքն մինչ քիչ մը հիւանդու.  
 թենէն ըզննանալով՝ կու մտածէր շու.  
 տով հեռանալու անկէ, յանկարծ քաղ.  
 քին դռներն ու ճամբաներն գոցուեցան։  
 'Իսաւրացիք անակնկալ յարձակմունք  
 մ'ըրին Մաթակայ (կեսարիոյ) սահման.  
 ները. քաղքին զօրապետն զօրքերովը  
 դուրս ելաւ անոնց դէմ, բնակչաց թող.  
 լով քաղաքը պաշտպանել։ Երկրորդ  
 առաւօտ Ոսկիբերան իր բնակած տու.  
 նը պաշարուած տեսաւ. բայց զարմանք,  
 ոչ յիսաւրացոց՝ այլ արքեպիսկոպոսէն  
 գրգռեալ միանձանց գնդով, որք կու  
 սպառնային տունը այրել՝ թէ ոչ շու.  
 տով ելնէ երթայ. և այնպէս գլուխնին  
 տաքցեր էր՝ որ քաղաքապետին զինուո.  
 ըաց անգամ վախ կու ձգէին և կու ծե.  
 ծէին, և ոչ իսկ քաղաքապետէն պատ.  
 կառէին։ Սա չկարենալով անոնց խօսք  
 հասկըցընել, մարդ զրկեց առ Փարե.  
 տրիոս որ թող տայ խեղճ հիւանդին  
 հանգչիլ ինչուան որ քիչ մը վրայ դնէ  
 և ճամբաները բացուին։ Ճար չեղաւ հա.  
 մոզել. երրորդ օրը այլ աւելի սաստկու.  
 թեամբ կու օտիպէին, վանտէին սուրբ  
 պատրիարքը. որ ջերմին և կէսօրուան  
 տաքութեան ատեն՝ հազիւ կրնալով  
 զինքը պատգարակի մէջ ձգել, հանել  
 տուաւ քաղքէն. մինչդեռ բազմութիւն



քաղաքացեաց շուարած կուլային, և քանի մը քահանայք ամբշնալով և հառաչելով ետևէն կ'երթային. և այրած սրտով՝ «Աւելի լաւ է կ'ըսէին որ իսաւրացոց ձեռք ընկնիս, քան մերոնց պէս» մարդատեցից մէջ մնաս»։ Ռուփինոս պաշտօնէին բարեպաշտ այրին Սելուկիա՝ աղաչեց, և տանել տուաւ զՍուրբն իր գեղի տունը, որ չորս հինգ մղոն հեռի էր քաղքէն։ Անարժան հօտապետին նախանձն՝ ասով այլ գոհ չեղաւ. այլ այնքան սպառնացաւ վախցուց բարի տիկիներ, որ ականայ և լալով ստիպեցաւ իր հիւրը հեռացընել. սակայն գեղեցիկ և ազնիւ խորագիտութեամբ ձեացընել տուաւ թէ բարբարոսներուն վախէն է։

Կէս գիշեր էր. հանդարտ և կարօտած քուն մը կուլ քաշէր Ոսկիբերան, երբ յանկարծ իր ընկեր քահանայն (Եւեթիոս) խթելով արթնցուց, բարբարոսք կու գան, փախչինք ըսելով։ «Անլուսըն» կայ, մառախլապատ, տխուր կէս գիշեր էր, կ'ըսէ ինքն Ոսկիբերան, որ ըզմեզ մեծ տարակուսի մէջ կու ձգէր, ոչ խորհուրդ տուող կար և ոչ ձեռք տուող. ամենքն զմեզ թողեր էին. զարհուրած, և գրեթէ մահուան սպասելով՝ հիւանդագին անձամբ ելայ և ջահերը վառել տուի. բայց երեցս մառել տուաւ, որ չըլլայ թէ լոյսը տեսնելով՝ բարբարոսք վրանիս յարձրկին։ Ուրեմն ջահերը մարած ընկանք ճամբայ, որ սաստիկ քարոտ և խորտուբորտ էր. անանկ որ պատգարակս կրող ջուրին զարնուելով՝ ընկաւ, դեսպակն այլ զիս այլ անանկ զլորեց, որ կարծէի թէ այլ պիտի չեղնեմ. հագիւ ոտք ելայ, և սկսայ կամաց կամաց քայլել՝ օգնութեամբ Եւեթիոսի, որ ինքն այլ ձիէն ընկած՝ թեւս կու բռնէր. և այսպէս ուրիշի ձեռքով առաջնորդած կամ քաշքշած՝ այն դժուարին տեղոյ և վտանգաւոր լերանց մէջ կէս գիշերուան ատեն կու խարխափէի. մտածէ թէ ինչ կու կրէի ցաւերէս, ջերմին տապնապէն, և եղածը չգիտնալով՝ կարծելով թէ հիմայ հիմայ այն ահաւոր բարբարոսաց ձեռքը պի-

տի ընկնինք։ Կարծեմ թէ միայն այս ատեն քաշած տառապանքս՝ բաւաւ կան էին շատ մը մեղքերս քաւելու և ինծի վարձք պատրաստելու։ Յետոյ իմացաւ և կ'իմացընէ Ոսկիբերան, որ այս ամեն բանի պատճառ նախանձն է եղեր, այն՝ որ զինքն հալածեց 'ի Կ.Պօլսոյ, և հիմայ այլ 'ի Կեսարիոյ. անոր համար ցաւագին և այրած սրտիւ կ'աւելցընէ խօսք մը, զոր ես այլ դողալով կ'արտաբերեմ. թէ ոչ յիսաւրացուց « և ոչ յայլմէ ումքէ այնպէս երկնչիմ ես՝ որպէս յեպիսկոպոսաց, բաց 'ի սակաւուց ոմանց »։ Այսքան ծանրաւ կշիռ են գործք անոնց՝ զորս երկինք և երկիր կու ճանչնան այցելու, հովիւ և հայր ժողովրդեան։...

Այս տառապագին և դժնդակ ուղևորութիւնս՝ պատճառաւ իր հիւանդութեանն, անդադար ջերմին, արշաւանաց բարբարոսաց որ սովորական ճամբաները բռնած էին, շատ ծանր և երկար եղաւ. գրեթէ ամիս մը և աւելի. իսկ Պօլսէ ելնելէն 'ի վեր 70 օր, մինչև հասաւ Ոսկիբերան իր աքսորանաց սահմանեալ տեղը, 'ի Կոկիւսոն. որոյ անունէն անգամ կու սոսկար և կու փափագէր ուրիշ տեղ մը քշուիլ. բայց ասոր համար այլ գոհացաւ ըսաւ՝ փառք քեզ Աստուած յաղագս ամենայնի։

Կոկիւսոն՝ ուր իրեք տարւոյ մօտ պանդըխտեցաւ Ոսկիբերան, և ուսկից գրեց հարիւրաւոր նամակներ, իրեն համար էր աւսայագոյն, աւնապառագոյն վայր հաւօրէն աշխարհի<sup>1</sup>։ (εν Κουκουσῶ κα-  
θήμενοι, τῷ πασθῆς τῆς καθ' ἡμᾶς οἰκου-  
μενης ἐρημοτατῶ χωρίῳ). Վասն որոյ պատշաճ է մեզի այլ ծանօթանալ այս տեղոյս. թէ և իսկգրանէ անտի մինչև հիմայ այլ խիստ քիչ ծանօթ մնալովն աշխարհագրաց և ուղևորաց, անգամ մ'այլ կ'արդարացընէ իր ամենէն մեծ տարաբնակ պանդխտին վկայութիւնը։ Հին Գամրաց կամ Կապապաղովկիոյ, Կիւլիկիոյ, Կոմագենիոյ (կամ Եփրատացուց)

<sup>1</sup> Այսպէս անունէ և Պալլագիոս. εις ἐρημό-  
τατον πολίχυν της Αρμενίας.



և Գ. և Բ. Հայոց միջասահման՝ փոքր աշխարհ մը կար հին ատեն, Կառաւոյունիք ըստած, զոր ոմանք Կապապոլովիոյ մասն անուանէին, այլք (ինչպէս Պաղով) փոքր Հայոց. միջին դարու մէջ՝ մերքս Ջախան աշխարհ կամ երկիր կ'աւանանեն այս տեղս, յանուն Ջահան կամ Ճիհան (որ և Պիւռամիս) մեծ գետոյ. որ կու բղխէ 'ի զանազան կողմանց լերանցն. ասոնք են յարեմոյից և հիւսիսոյ՝ Անտիտաւրոս, 'ի հարաւոյ՝ Ամանոս, իսկ յարեւելից՝ այն լեռներն՝ որ Եփրատայ ջրերը կու գատեն 'ի Ջահանայ, զսա 'ի Միջերկրական ծով իջեցնելով, զնա՝ յարեւելս զրկելով մինչև 'ի Ծոց Պարսից։ Այս զանազան լեռներէն շրջապատեալ երկիրն՝ 'ի հարկէ ձևացընէ լեռնադաշտ կամ մեծ լեռնահովիտ մը, ինչպէս կ'աւանանէ այլ զսա հին աշխարհագիրն Ստրաբոն, և է շատ ընդարձակ. հիմայ Ալպստանի կամ Էլպսոսթանի (որ և Ալպատան) գաւառն, և Փալսնկա-օւլա գաշտն. որոց հարաւակողմը Ալպստան՝ կամ մեր Ջահան քաղքէն վար՝ կու միանան երեք գլխաւոր գետակք, ժողովելով լեռնահովիտին ջրերը, և միաւալով ձևացընեն զգետն մեծ Ջահան, որ անկից կ'իջնէ 'ի Մարաշ, և կու մտնէ 'ի Կիւիկիա, երթալով յԱնարզաբա և Մսիս, թափիլ 'ի Ծոցն Հայոց (հիմայ՝ Իպքէնտէրունի ծոց)։ Այս երեք գետակաց արեւմտագոյն և հարաւագոյնն է Կոկիւսոնի գետն (կէզըսիւն-սու). որոյ եզերքն է շինած մեր հետաքննելի տեղին, ընդ մէջ Հաճնայ և Խօզանօղլուի լերանց՝ յարեմոյից, Ջահանայ՝ յարեւելից, և Ուլնեայ կամ Զէյթունի՝ որ կայ 'ի հարաւոյ։ Յանուանէ գետակին և ուրիշ նշանաց կու հաւաստի՝ որ ասոր բռնիկ հովիտն կամ վիճակն է Կոկաց գաւառն յիշեալ 'ի մերոց պատմաց միջին դարու, որոյ գլխաւոր չէնք կամ քաղաքն՝ անշուշտ համանունապէս Կոկաց քաղաք կամ Կոկս կոչէր ըստ սովորութեան Հայոց (որպէս Կարս՝ Կարուց քաղաք), զոր Յոյնք և Լատինք փոխեցին 'ի Գոզգոշստոն, յետոյ և Հայք 'ի Կոկիշսոն, յորմէ ցարդ և այլազգիք Կօքսիւն

կամ Կօքստուն կոչեն։ Կոկիւսոն՝ զոր Յոյնք միշտ քաղաք Հայոց կոչեն, և 'ի գիրս մեր կոչուած է նաև քաղաք Հայոց Անհալ, հիմայ երեսէ ընկած աւան մը կ'երևի 2-300 տաճկաբնակ տնով, որոց հետ չեն յիշուիր մերազգիք, այլ անոր մօտերը երեք գիւղից մէջ։ Տեղւոյն գիրքն ինքնին կու կրկնէ Ոսկիբերանի ըսածները. ամառը բաւական տաք պիտի ըլլայ, լայնութեան 38 աստիճանին տակ ըլլալով, իսկ ձմեռը՝ անհնարին ցուրտ, թէ բնական յատակին բարձրութեամբ և թէ բարձր ու ձիւնապատ լերանց մեր ձաւորութեամբ. որք չէ թէ միայն երկայն շարք մը ձևացընեն արեւմտից կողմէն, այլ և ոմանք ցրուեալ կանգնին դաշտին մէջ. և անով այլ աւելի վայրենի և դժնդակ կերպարանք մը կու տան, և ճամբայ ընելու դժուարութիւն։ Ուստի ոչ այնքան բնակութեան և առևտրի յարմար՝ որքան ամրութեան և պահպանութեան տեղ մը կրնար ըլլալ. այնպէս այլ ըրեր էին սրատես շահագէտ Հռովմայեցիք. բերդով ամրացընելով և պահպան գունդ մը դնելով հոն։ Այսպիսի ամրութեամբ, դժարութեամբ, և հեռաւորութեամբ, ('ի սահմանաժայր Յունաց, Հայոց և Ասորոց), աքսորանաց այլ յարմար տեղ սեպուեցաւ. ինչպէս և 70 տարի յետ Ոսկիբերանի՝ Ջենոն Իսաւրացի կայսրն իր հակառակորդ Բասիլիսկոսը տնով տեղով հոս աշտարակի մը մէջ փակեց, սովամահ ըրաւ։ Քիչ շատ լսեր և գիտէր Ոսկիբերան իր արգելանաց անմխիթար դիրքը. սակայն երբ յետ ամօրեայ տառապանացն որ 'ի Կեսարիոյ սկսեալ հասաւ հոս, և գոնէ հաւածողներէն ազատած՝ ընկաւ իր առանձնութեան տնակը և յանկողին, և սկսաւ շունչ առնուլ ողջանալ, ու Իսաւրացուց այլ ետ քաշուելովն՝ վախն այլ փարատեցաւ, առջի կարծածին չափ տխուր և ահարկու չերեցաւ Կոկիւսոն. « Ինչո՞ւ համար կու տրտմիս, կ'ըսէ առ Ոլոմպիադա, այս տեղւոյս ամայութեան վրայ... « Թէպէտ և ոչ հրապարակ ունի այս քաղաքս, ոչ վաճառանոց, բայց » իմ ինչ փոյթս են ասոնք. ինծի հար-



կաւոր եղածն առատապէս կու գտնեմն, (հիւրընկալաց ճարտարելովը) : Նոյն պէս ուրիշ գրի մէջ այլ կ'ըսէ, թէ երբ 'ի կոկիսոն հասայ՝ սկսայ անամպ երկինք տեսնել, մաքուր օդ ծծել, հիւանդութիւնս փարատեցաւ. և ամեն դիէ սկսան հարկաւոր եղածքն տեղալ՝ բարերարաց յօժար կամքով : Այս բարերարաց մէկ գլխաւորն էր Հայաստանի այս մասին նախարարն կամ կողմնակալն՝ Սոպատրոս անուամբ, որ հայրաբար կու խնամէր իր իշխանութեան տակ եղածները. Սսկիբերան գովութեամբ և շնորհակալութեամբ կու յիշէ զնա, և անոր մէկ որդին՝ որ հոն էր՝ ուսմանց ետեւէ եղած, կու յանձնէ իր բարեկամ՝ Կիւրակոս եպիսկոպոսին խնամոյ : — Մէկ բարերար և խնամածուն այլ էր տեղւոյն եպիսկոպոսն, որ յայլոց կոչուի Սղեւիփոս (եղբայր), որ նախ Արաբացոց եպիսկոպոս էր, կ'ըսեն. և պատկառելով յարժանապատիւ պատրիարքէն՝ ուլեց անոր թողուլ իր աթոռը, զոր 'ի հարկէ յանձն չառաւ Սուրբն, Որոշեալ սահմանէն անդին չանցնիլը, ըսելով. այլ ըստ պատշաճին՝ վարդապետութեան պաշտօնը կամ արուեստը կատարէր :

Ասոնցմէ և ամենէն աւելի մտերիմ և ձեռնտու եղաւ Դիոսկորոս, զոր Տէրն իմ կոչէ Սսկիբերան, որ շատ հեղ եպիսկոպոսաց կու տայ այս տիրական աւանդ. և մենք ուրիշ վաւերական աւանդութենէ այլ գիտենք որ նա մեր ազգէն էր՝ եպիսկոպոս և վարդապետ Հայոց այն կողմերուն, և ինչպէս Սսկիբերանի և Շնորհալոյ յիշատակքն տան դուշակել՝ ազնուազգի, այլ և Պահլաւունեաց տոհմէն. ցեղէն աւելի մեծահոգի և տաքսիրտ ըլլալով՝ երբ լսեց թէ Խօսնակն եկեղեցւոյ իր սահմանաց մէջ պիտի պանդխտի, ուրախութեամբ և մեծարանգր մարդ խաւրեց մինչև 'ի Կեսարիա, (մինչդեռ հոն էր Սուրբն) և հրաւիրեց իր տունը. Սուրբն այլ մեծարեց զնա և յանձն առաւ խնդիրը, թողլով ուրիշներուն հրաւերը. և երբ եկաւ 'ի Կոկիսոն՝ պատրաստ դրաւ Դիոսկո-

րեայ տունը՝ ամենայն կարեւորք, ըստ կարեւորցն. զոր բաւական չսեպելով տաւ նուտէն՝ բոլոր իսկ տունը թողուց Սսկիբերանի պիտոյից և հանգստեան, ինքն իր գեղի տունը քաշուելով. և տանը վերակացուն պատուիրելով՝ որ ամեն կարելի դիւրութեան հնարք ընէ հանգչեցընէ իր արժանապատիւ հիւրը : Ասոր նախանձելով ուրիշ շատեր այլ՝ մէկմէկէ աւելի կու ջանային ծառայութիւն մ'ընել Սսկիբերանի : Ասոնց մէջ գովութեամբ կու յիշէ սարկաւազուհի մ'այլ՝ Սաբինիանա (Ջաւենա ?) աւանդ, որ տարիքն առած և շատ այլ տկար ու հիւանդոտ էր. սակայն նոյն իսկ Սսկիբերանի հոն հասած օրը՝ եկաւ իրեն այցելութեան, թէ և հազիւ կրնար քայլել. բայց երիտասարդի պէս աշխոյժ և զուարթ կու խօսէր, և կ'ըսէր Ս. հայրապետին, որ եթէ զքեզ Սկիւթացոց աշխարհն այլ քշելու ըլլային, ինչպէս որ կ'ըսէին, ինչուան հոն այլ կու գայի քեզի : — Ազնիւ պառաւ, որքան տարբեր յեւդոքսիայ սրտէն : Գուցէ մերազգի էր և այն թարեպաշտ և ազնիւ Հրահատն, ինչպէս կ'ըսէ Սսկիբերան (Աֆրաադ կոչելով) որ Դիոգենէս անուամբ մեծի մը կողմանէ ընծաներ բերեր էր առ Սուրբն, և երբ սա չէր ուզեր զամենն այլ ընդունիլ, Հրահատ յանձն չէր առնուր հեռանալ անկէ, և ոչ իսկ սրբոյն նամակը տանիլ, ինչուան որ բոլոր բերածները չընդունի. « այնպէս ինծի հետ կապուեցաւ », կ'ըսէ Սսկիբերան. և կ'աղաչէ զԴիոգենէս որ այն պարգևները զրկուին 'ի Փիւնիկէ 'ի պէտս նոր հաւատացելոց : Անկէ ետեւ նամակացը մէջ և բերնով այլ կու պատուիրէր Սուրբն, որ այլ իրեն ընծայ չխաւրեն. վասն զի ինչուան կանայք իրենց զարդերն անգամ խաւրէին : Առածներն այլ աղքատաց կու տար Սսկիբերան, կամ գերիները ազատելու յիսաւրացոց : Իսկ ինքն իր գերութեան ատեն աւելի շատ բարեկամ ունեցաւ քան յազատութեանն :

Արդ ասոնց և նմանեաց խնամօք և սիրով՝ և օգոց լաւութեամբ շուտով վրայ



գնելով պանդուխտ խօսնակն մեր, կըր-  
ցաւ գուրս այլ ելնել, և բնութեանս աւ-  
տուածատուր և աննախանձ գեղեցկու-  
թիւնը և կենսատու շունչը վայելել: Դեռ  
սեպտեմբեր ամիս էր. տաքերն մեղմա-  
ցած զուարճալի աշնան եղանակն աի-  
րէր բարձրադաշտակաց վրայ, հովտաց  
և լեռանց, ծմակաց և ծործորոց մէջ.  
ուսկից դեռ քաղցրաշարժ կրկըջանօք  
կ'իջանէին արծաթափայլ առուակք,  
կու հնչէին առապարասէր թռչունք, և  
ծաղկէին զանազան գունով վայրենի  
ծաղիկքն, իբրև անխուով և անմեղ խա-  
ղաղութեան մը մէջ. «Միայնութիւն,  
» խաղաղութիւն, անգորրորութիւն բա-  
» ռում և մարմնոյ կազդուրումն », ըզ-  
գաց, կանչեց, գրեց Ոսկիբերան. γούνα,  
γαλήνη, ἀπταγμοσύνη πολλή, σοματος ευ-  
ρωστία. Տեսաւ և յիշեց անշուշտ իր երկ-  
նաւոր վարդապետին ցուցած և ըսածը,  
զոր և ինքն իսկ երբեմն մեկնաբանած  
էր, « զառաւելութիւնն... գեղեցկու-  
» թեանն, զոր տուեալ է շուշանայն  
» վայրենեաց... եթէ Սողոմոն պարտե-  
» ցաւ 'ի գեղեցկութենէ նոցա, յամե-  
» նայն... 'ի փառս իւր, յայտ առնէ թէ  
» յամենայն իսկ 'ի թագաւորութեան  
» իւրում՝ այնպիսի ինչ ոչ զգեցաւ. և  
» ոչ եթէ 'ի միոյ ծաղկէն պարսեցաւ  
» և միուսումն նմանել կարաց, այլ յա-  
» մենեցունց միանգամայն յաղթեցաւ.  
» վասն որոյ և ասէ իսկ, եթէ Ոչ իբրև  
» զմի 'ի նոցանէն... Զինչ նուազագոյն  
» քան զայն կայցէ, զի որ այսօրն իցէ  
» և վաղիւ չիցէ, և յայնմ ևս զայնպիսի  
» պայծառութիւն ցուցանիցէ: Զի որ  
» խոտոյն՝ որ չէ ինչ 'ի պէտս և ճարակ  
» հրոյ, զայնպիսի գեղեցկութիւն չնոր-  
» հեաց, զիմրդ ոչ քեզ՝ որ 'ի պէտս  
» հաստատեցար, տայցէ զամենայն  
» պէտս... ո՞րչափ ևս առաւել գրեզ՝  
» որ քան զամենայն ինչ պատուակա-  
» նագոյն ևս, ամենայն պիտոյիւք պա-  
» տուիցէ »: Այն որ այսպիսի խորհրդ-  
դածութեամբ կու խրատէր երբեմն իր  
ժողովուրդը, ո՞րչափ աւելի խորհրդա-  
ծէր հիմայ տեսնելով այս վայրենի ծաղ-  
կըններ՝ իրենց պարզ և գերսողոմոնեան

գեղեցկութեամբն՝ այն բացավայր ա-  
ռանձնութեանց մէջ, որոց ինքն իսկ էր  
ամենէն աւելի միայնացեալ անձն, միան-  
գամայն և ամենէն աւելի զանոնք լեցը-  
նողն՝ իր աստուածափառ ներկայու-  
թեամբն:

Հ. Դ. Մ. ԱԼԻՇԱՆ

Էր Հարունակոյի:

Վիճակագրութիւն երկարութեան  
և զինուորաց.

Վերջերս Գաղղիա հրատարակուած  
պաշտօնական վիճագրութեան լրոց մէջ  
երկու կարևոր գիտելիք կը կարդանք:  
Առաջինն է բոլոր աշխարհք շինուած  
և գործադրուած երկաթուղեաց երկաթ-  
նութիւնը, որ է 124400 հազարամէդր,  
հետևեալ կերպով բաշխուած աշխար-  
հիս հինգ մասանցը մէջ:

|          |       |             |
|----------|-------|-------------|
| Ամերիկա  | 62000 | հազարամէդր, |
| Եւրոպա   | 60000 | »           |
| Ասիա     | 1600  | »           |
| Ովկիանիա | 300   | »           |

Իսկ ըստ պետութեանց ունին

|                 |       |             |
|-----------------|-------|-------------|
| Միացեալ Նահանգք | 50000 | հազարամէդր, |
| Ենգլիա          | 20000 | »           |
| Գաղղիա          | 12000 | »           |

Երկրորդ գիտելիքն է Եւրոպայի բնակ-  
չաց և զինուորաց համեմատութիւնը.  
Եւրոպա ունի իբր 327 միլիոն բնակիչ.  
4700000 զինուոր, որոնց ծախքն է  
տարուէ տարի իբր երկու հազար հինգ  
հարիւր միլիոն ֆռանգ: